

ՔԱՆԱԿՆ ԵՎ ԳՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիտի համար
 սարկուս 12 մր
 վճարված 6
 Ա. սարկուսի
 համար սարկուս 15
 վճարված 8
 Ամբիկուսի համար
 Տարկուս 3 ս.ր.
 վճարված 1.50
 ԱՄՆԻԿԻ ՎՃԱՐԵԼԻ

Մանուգուսի սոյր սուս-
 չիկ երեսին համար 40 ս.
 վսկ վերջին երեսի հա-
 մար 20 սակախի է. երկհեկ
 սակախի սակախներու համար
 20 սկս զնոց կրկնայ

ՇՈՒԹ

Պուշկարիտի համար
 ՍՏՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒՄ

Редакция на ВЪСТНИКЪ
 „Паржумъ“
 Варна
 Redaction du journal
 „Charjourn“
 Varna (Bulgarie)

Պուշկարիտի համար
 ՍՏՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒՄ

Պուշկարիտի համար ձեռքի
 ≈ 15 ՍՏՐԱՆՈՒԹՅԱՆ ≈

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԹ ՕՐԵՐԸ

Վաճառի համար ձեռքի 10 սակախի

ՇՈՒԹՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԲ Է ԿԱՆԵԿՆ ՎՃԱՐԵ

Չափի տոներուն առթիւ
 յառաջիկայ շրջաբարթի օր
 «ՇՈՒԹՈՒՄ» չի պիտի հրատա-
 րակուի:

ՎԱՂԸ

Վաղը մարդկութեան մեծ բա-
 րերարիք է, Մեծ Նազովրեցու բա-
 րոյական յաղթանակի 1902րդ
 տարեդարձն է:

1902 տարի շարունակ միլիո-
 նաւոր մարդիկ, տարբեր ազգեր
 ու ցեղեր, թէև շատը առանց
 լիովին ըմբռնելու Նազովրեցու
 քարոզած և կտակած դաւանաբը,
 տունը են ու տնում են այդ մեծ
 տունը, փառարանել ու փառա-
 բանում են մարդկութեան բարո-
 յական աշխարհը յեզաշրջողի
 մեծ անունը:

Հայ ժողովուրդն էլ վաղուց է
 որ պաշտում է Նազովրեցուն. գա-
 րերով նրա կտակած դաւանանքի
 համար զոհեր է տուել, արիւն է
 թափել. և դեռ մինչև օրս այդ
 դաւանանքն է Հայ ժողովրդի
 հալածանքի ու սանջանքների
 զխաւոր պատճառը:

Մեծ Նազովրեցին համեղբայ-
 րութեան գաղափարի զոհը եղաւ
 Խաչի վրայ 1902 տարի առաջ.
 Հայ ժողովուրդը դարերով Խաչի
 վրա է շարունակ տանջվում է
 նոյն այդ Խաչի համար. Հայ ժո-
 ղովրդի ամենաընտիր զաւակնե-
 րը՝ Նազովրեցու գաղափարական
 հարազատ աշակերտները Մեծ
 վարդապետի նման իրենց երի-
 տասարդ շունչերը փչում են
 նոյն անարգ սիւնների վրա, հայ
 ժողովրդի կեանքը. աղտոտ
 բորբանս, բարոյական վերքե-
 րով զարշուտած կեանքը՝ վերա-
 նորոգելու, վերակենդանացնելու
 համար:

Վաղը համեղբայրութեան, ան-
 կեղծ բարոյական սիրոյ գաղա-
 փարի մեծ զոհի և մեծ յաղթա-
 նակի տունն է. ուրեմն տունը և
 ամբողջ մարդկութեան այն զա-
 ւակների, որոնք եղբայրութեան,

ժողովրդների բարոյական վերա-
 ծնութեան և համաշխարային սի-
 րոյ գաղափարի համար զոհի
 են խաչերի, կախաղանների,
 խարոյկների վրայ. կուրի դաշ-
 տում և բանտերում:

Տօնը մաքուր, անարատ և կար-
 միր արիւնի, թափված գաղա-
 նաբար, բռնակալների գահերի
 տակ. մեծ տօնը ազատասիրու-
 թեան, բռնաւորական օրէնքների
 դէմ ըմբոստացման խմբումի:
 ՎԱՐԴՈ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Ռուսական կայսրութեան մէջ
 կրկին սկսած է բարձրաստիճան
 պահպանողական պաշտօնեաներու
 կոտորածը:

Երկարատեւ գաղափարմէ մը
 վերջ, ինչպէս կերելի ռուս գե-
 զոհ տարրը կրկին սարսափեցու-
 ցիչ միջոցները ձեռք առնելը
 անհրաժեշտ համարած է:

Կառավարութիւնն ալ ոչ մէկ
 զիջում ընելու տրամադիր կերե-
 լի. Ալէքսանտր երրորդի խիստ
 ուստիկանական պաշտօնեաներէն
 մին՝ Ֆոն Բլէվէ ներքին գործոց
 նախարար նշանակուած է:

Ռուսանդները՝ չը նայած անե-
 րեւակայելի ուստիկանական խիստ
 հակոզութեան, կրցնեն համաժո-
 ղով մը գումարելու իրենց բռնելիք
 ընթացքին համար կարելոյ որո-
 շումներ տալ. Այդ որոշումներու
 հիմը կը կազմեն Մոսկուայի ու-
 սանդութեան յանպատրաստից
 ըրած միջոցներն որոշումները:

Խորանսովալի մէջ խաղաղու-
 թիւնը վերահաստատելու բա-
 նակցութիւնները դեռ որոշումի
 մը չը յանգեցան:

Պօէրներու պատուիրակները
 Թրանսովալի կառավարիչ Վիլնէ-
 րի և Քիչնէրի հետ տեսակցելէ
 վերջ, գացած են իրենց գնդա-
 պետներուն հետ խորհրդակցելու
 անգլիական կառավարութեան ա-

ռաջարկներու մասին:

Անգլիական մամուլին մեծ մա-
 սը լաւատեսութեամբ կը վերա-
 բերի այդ տեսակցութեան, բա-
 ցատրելով որ եթէ պօէր կարելոյ
 ներկայացուցիչները զիջանելու
 տրամադիր չըլլային, դնդապետ-
 ներուն հետ տեսակցելու չը պի-
 տի երթալին. ոմանք ալ յոռի-
 տես են և կը յայտարարեն որ
 պօէր պատգամաւորները ուզած
 են առիթէն օգտուիլ և իրենց
 բոլոր զօրապետներուն հետ հա-
 մախմուռելով խորհրդակցու-
 թիւններ ընել պատերազմը ինչ-
 պէս շարունակելու մասին:

Պօէր պատգամաւորները Քիչ
 նիւնէն զինող ազար խնդրած են,
 բայց Քիչնէր համաձայնած չէ.
 այնպէս որ մէկ կողմէն պատե-
 րազմը կը շարունակուի:

Պարսկաստանի Արապատականի
 թեմի առաջնորդ Մուրատեան
 վարդապետին դէմ դժգոհու-
 թեան նշաններ կը նկատուին:

Հիասթափումը մեծ կերելի.
 վարդապետը գիտութեան, լուս-
 րանի հակառակորդ մը կը հտն-
 ցիսանայ:

Նուրատեան հին կուսակրօնիմը
 պէս, գիտութիւն տարածողները
 անհաւատներ կը հուշակէ, անոնց
 վարկը ժողովրդին առջեւ կոտ-
 րելու համար. Հին և փոստած
 պէնք մը մեր կղերականութեան
 ձեռքին մէջ, Աստուած աղատէ
 մեզ կղերականներու էն լաւէն
 իսկ. «ոչ արարի երեսը կույցնք
 և ոչ ալ ճամին շաքարը»: Բայց
 ասոնք այն արարներէն են, որ
 միշտ հէքեթներու մէջ գտ-
 նուած արարներուն պէս առջեւ
 կըլլան:

Պէտք է ստոնց վարելու թը-
 լըսըրը գտնալ:

Սո թըլսըրը կը մաղթենք Ա-
 տրպատականի մեր աղագայնոց,
 որ կարենան Ելիշէին ճոճոան
 լեզուն քիչ մը սանձահարել:

Արդեօք Մուրատեան Ելիշէն
 ինք բանի մը կը հաւատա՞յ,
 Շատ կասկածելի է Չի հաւատար.

բայց կը կեղծէ:

Մենք կեղծիք մը՝ Օրման փա-
 շան առ սեւագլուխ Մուրատեա-
 նին հեռագրած է որ հայ յիզա-
 փոխականներուն արգելէ պար-
 սից սահմանադրէն Տաճկաստան
 անցնին անշուշտ Սուլթանէն
 Օսմանիէ մը խոստանալով: Տես-
 նանք Ելիշէ Մուրատեան այդ
 «մենք պատիւին» պիտի արժա-
 նանա՞յ. եթէ կարսի մէջ վեր-
 չերս բռնած դիրքը մտաբերենք,
 հաւանական կը թուի որ Օրմանե-
 անի ընկերակցի:

ԿԵՏ

ՓԱՍՏԵՐ ԵՒ ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախկ Գ.

Թաւրիզ, 16 Մարտ

Մի քանի խօսք էլ Ե. Վ. Մու-
 րատեանի մասին և վերջապիւ
 ու պարզ կը լինի բոլորի համար
 նա:

Անցեալ կիրակի է՛լ աւելի ա-
 ռաջ գնաց մեր «ազատամիտ» ա-
 ռաջնորդը իր մի քարոզով, որ
 համեմատ էր մի շարք հայհոյու-
 թիւններով և անորոշ ակնարկնե-
 րով. Խողնելով մի կողմ բոլոր
 հայհոյանքները և ակնարկները.
 վերջենք նրա այս խօսքերը.
 «Երկարութիւն չէ՞ խօսել լաւա-
 նում Ֆիմիլիզմի, կանանց ազա-
 տութեան մասին, դասախօսել
 գիտութիւններից, երբ ժողո-
 վուրդը գեռ «այը ու բեն» չը գի-
 տէ՞. Այդ խօսքերի վրա դառն
 կերպով կարող ենք միայն ծիծա-
 կել: Մեր խորին համոզմունքն
 այն է, որ ժողովուրդը կարող է
 հասկանալ գիտութիւնը, եթէ
 դասախօսուի մասշէլի և ժողո-
 վրդական ձեւով, ինչպէս և շատ
 օրինակներ եղել են: Եւ վերջա-
 պէս, եթէ նոյն իսկ մի րոպէ ըն-
 գունենք, որ այդ ճիշդ է, բայց
 աւելի լաւ չէ՞ որ լինի փոխանակ
 եկեղեցու բեմից «ակնարկելու»,
 յայտնէր իր կարծիքը լաւարան-
 կան ընկերութեան վարչութեան,
 զուցէ այն մասնակ վարչու-

Թեան կարծիքը լսելով համոզուէր, որ անհրաժեշտ են այդ դասախօսութիւնները, կամ հէնց դասախօսութեան ժամանակ կարող է նկատել: Ցաւալով պէտք է նկատենք, նախ որ նա ներկայ չէ եղել այն դասախօսութիւններին, որոնց մասին ակնարկում է բեմից, ուրեմն միայն ուրիշի պատճառով վրա հիմնուելով, առանց իմանալու թէ ինչպէս է տարւել դասախօսութիւնը, եւ երկրորդ, որ ամենագլխաւորն է, կարծէք եկեղեցու բեմը դարձրել է հակաճառութեան ամբիօն: Օրինակ, լսարանում մի նիւթի մասին դասախօսում է, առաջնորդն էլ ներկայ է, նա փոխանակ այնտեղ հակաճառելու, ուր յարմարութիւն ունի նաեւ հակառակորդը պաշտպանելու, իր համոզմունքը և կարծիքը ազատօրէն ասելու, քարոզի նիւթ է դարձնում նա այդ դասախօսութիւնը, խօսում է եկեղեցու բեմից ազատ, համարձակ ակնարկներով ի, հաստատ համոզած լինելով, որ հակառակորդը հնարաւորութիւն չունի պաշտպանելու: Այդ միջոցը, գոնէ մեր կարծիքով, շատ ստոր, անարգ և անպատուարեր է:

Բացի այդ, անհրաժեշտ է մէկ հանգամանքի վրա էլ շեշտել: Առաջնորդը եկեղեցու բեմից քարոզում է, որ չը բաժնասել իրար, որ դա ազատ միջոց է, բայց հէնց ինքն էլ—ցաւալին դրանումն է—բամբասում է, ինքըն էլ զրպարում է այստեղ և այն տեղ, սրա և նրա մօտ ստում, խօսում է թէ «այսինչ» դպրոցում անհաւատութիւն են սովորեցնում, նրանք անհաւատներ են պատրաստում, թէ Լիւաւայի դպրոցի դասն ինչ ուսուցչի մասին տարածած լուրերը ճիշդ են եղել և այլն: Առաջնորդը այդ բոլորը ասում է, ի հարկէ, հիմնուելով մի միայն մի քանի կեղտոտ անձնաւորութիւնների բամբասանքների վրա և տարածում, խօսում է դրանց մասին, որպէս կատարուող ճշգրտութիւնների: Փոխանակ սյգպէս խօսելու, միեւնոյն է թէ բամբասել, որ երբէք պատիւ չէ կարող բերել մի առաջնորդի, աւելի լաւ չէ՞ր լինի, որ դպրոցի ղեկավարներից իմանար ճշգրտութիւնը, կամ առհասարակ ճիշդ իսկական ազբերից իմանար, քան թէ հաւատար «սէ-կօսէնի բէն»: Մեր առաջնորդը թէեւ իր անդրանիկ քարոզի մէջ շեշտեց այն հանգամանքի վրա, թէ ո՛չ մէկի ասածին չի հաւատալու, մինչեւ ինքը չը ծանօթանայ գործի հետ, բայց, ինչպէս երևում է, զըրանք միայն դատարկ խօսքեր էին, ինչպէս առհասարակ նրա միւս խոստումները:

Տարօրինակ է մեր առաջնորդը եղիչէ վ. Մարտեանը. տարօրինակ են մեծ մասով և նրա վարմունքները: Իսկ երեսփոխանական ընտրութիւնը եկաւ մնացած պակասը լրացնելու: Ո՞վ է տեսել, որ մի ծուխի ժողովուրդը մասնակցի մի ուրիշ ծուխի երեցփոխանի ընտրութեան: Նախ անցեալ կիրակի Ղալա թաղի երեսփոխանական ընտրութիւն էր նշանակուած հրատարակելին և Լիւաւայի ծխականները, բայց վերջիններս հրախրագրի մէջ յիշած չէր, որ Լիւաւայիները պէտք է մասնակցեն Ղալայի երեսփոխանի ընտրութեան, չէր յիշած նոյն իսկ ընտրութեան մասին: Յանկարծ Լիւաւայիները և Ղալայիները լսում են ժողովում առաջնորդից, որ այդ ընտրութիւնը միտցած պէտք է լինի. սմանք բողբոջում են զրադէմ, բայց այդ բողբոջի ձայնները լսելու մենք և ձայների մեծամասնութեամբ ընտրուած է այդ ձեւը. ընտրութիւնը կայանում է:

Չը մոռնանք ասել, որ ժողովին ներկայ էին միայն 67 հոգի. այն ինչ երկու թաղերում կայ մօտ 700 տուն: Վերջապէս ընտրութիւնը՝ ոտից գլուխ տարօրինակ, չը տեսնուած էր իր տեսակով և միանգամայն ապօրինի: Սպասում էր, որ վաւերական չը համարել այդ ընտրութիւնը, նորից կը բողբոջեն նոյն իսկ ներկայ չեղող Ղալայիները: Հէնց այդպէս էլ եղաւ: Ինչպէս լսում ենք նորից պէտք է Ղալայի երեսփոխանական ընտրութիւն լինի: Նոյն այդ ժողովում թէեւ առաջնորդը յայտարարեց, որ յաջորդ կիրակի Լիւաւայի երեսփոխանական ընտրութիւն է լինելու, բայց մինչեւ այժմ չէ եղել, և շատ հաւանական է, որ չի էլ լինելու: Ինչպէս երևում է, շատերի ասածից համոզուել է առաջնորդը, որ այդ ձեւով կատարված ընտրութիւնը ապօրինի է, ոչ մի միտք չունի:

Այս տեղ էլ, ինչպէս պարզ է, առաջնորդը շատ թեթեւ է վերաբերվել դէպի խնդիրը, թէ չէ ինչպէս բացատրել այդ վարմունքը: Շատ լուրջ պէտք է վերաբերվել դէպի խնդիրը, ուստի աստիճանի շատ բազմակողմանի կերպով, աչի առաջ ունենալ կարիքները, տնտեսական պայմանները շատ մօտիկից ուսումնասիրել, ահա զլիսաւոր և էական պահանջները, որոնցով պէտք է առաջնորդել եղիչէ վարդապետը:

Մի ցաւալի բան եւս, պէտք է խոտովանել, որ ես շատ եմ հետեւում առաջնորդի ամեն մի քայլին, բայց, երեւակայէք, քանի գնում է, պարզում է, որ

առաջնորդը անգոյն է. այսօր բոլորովին ծայրայից ազատամտական մտքեր է քարոզում, իսկ վաղը բոլորովին հակառակ ծայրայեղը: Ինչ և իցէ, ոչինչ չէ հասկացում մեր առաջնորդից, ոչ մի կապ չը կայ նրա վարմունքների մէջ:

Ե. Կուզեմք

ՄԻ ՌՈՒՍ ՌԻՍԱՆՈՂԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ
ՄՈՍԿՈՎԱՅԻ ԲԱՆՏԻՑ

13 մարտ

Թանկագին քոյրիկս, գրում եմ, բայց շատ քիչ յոյս ունեմ որ նամակս ձեռքդ հասնի, որովհետեւ ներկայ պայմաններում անհնարին է սյնչափ դաշտնագողի գրել, որ սասիկանս: Թեան ձեռքը չընկնի, իսկ սասիկանութեան միջոցով գրել չեմ ուզում:

Ահա թէ ինչեր պատահեցին. մարտի 9-ից սկսած մենք փակված ենք խցիկների մէջ, որովհետեւ նոյն օրը մենք այստեղ, բռնուում մի լուսավառութիւն սարքեցինք. այսինքն մենք լուսավառված լուսամուտներին կպցրինք կոչեր: Մեզ, առաջին օրեց սկսած, հսկում են բազմաթիւ զինւորներ: Բոլոր պահպանները և բանտապահները միայն մեր հսկողութեամբ են գրազված, և բացի այդ, Մոսկուայի զանազան զնդորից զինւորներ են բերված դրանց ընկերակցելու:

Բարձրագոյն դասընթացների ուսանողներին, որոնք մեր յարկի տակ գտնված յարկում են բանտարկված, նոյնպէս խցիկների մէջ փակեցին—նրանց էլ ենթարկելով իրենց սենեակներում դրված ազտեղութեան ամանը, որ դիշեր ցերեկ սենեակում է մնում, դուրս տանելու պատժին: Այս բարբարոսական և ազտոտ միջոցն են գտնի ճշմարտ դահիճները երիտասարդ և կրթված օրիորդների համար: Ուսանողներին մերժում են ուտել և անօթի մնալով են յայտնում իրենց անհնազանդութիւնը: Ու մինչեւ այդ պատժի վերացումը սնունդ չը պէտք է ընդունեն:

Եւ ահա չորս օր է որ նրանք ծով են պահում և երկուսանից, մենք էլ, նրանց հետ համաձայնելով, ու և է սնունդ մերժեցինք: Մեր բնկերներին մենք, որը ուսանողներին հետ էր սկսել ծով պահել, արդէն հիւանդ է և տարվեց բանտի հիւանդանոցը: Մենք պահանջում ենք որ ուսանողներին նշանակված պատժական այդ ձեւը վերցվի և նրանց խցիկները հանեն:

Այս բռնատացման մասին մայրիկին ոչինչ չը գրես. մեր դատաւիճիչը դեռ չը յայտնեցին մեզ:

Բայց այս օր գաղտնապէս մենք ձեռք գցեցինք մի լրագիր, որից մենք կարողացանք իմանալ թէ մեզինք 95ը Միւրի են աքսորված (Իրկուտսկի նահանգը) 2-5 տարով, իսկ 567 պէտք է ուղարկվեն Արխանգելսկ 3-6 ամիս բանտարկութեամբ, որտեղից և քեզ կը գրեմ: Մենք ոչ մի նորութիւն չունենք: Առհասարակ բանտից դուրս եղած նորութիւնները մեզ շատ դժուարութեամբ են հասնում: Մենք գրեթէ բոլորովին խզված ենք արտաքին աշխարհից:

Եթէ դու կարողանաս յարմարել ոստիկանութեան գրաքննութեան, գրի՛ր ինձ, միայն առանց ուշացնելու, որովհետեւ նամակդ ինձ Մոսկուայում չի հասնիլ, այլ կուղարկեն նոր հասցէիս:

Առ այժմ ես ինձ լաւ եմ զգում, երկու օրան անուազութիւնը դեռ ինձ չէ յոգնեցրել, իսկ ինչպէս կը լինի ապագայում, այդ վերջը կը տեսնենք: Այս ուսանողներին շատ կորովի են: Չորս օր ոչ մի սնունդ չեն ընդունել, բայց երեւց շատ լաւ են զգում: Արք. Մոսկուայի նահանգապետը, Չարի հօրեղբայրը, իմացել է այդ անօթութեամբ բռնատացման մասին, պատասխանել է — «Թող ծով պահեն, եթէ իրենց սպէ հանկի է»: Երեկ Մեծ Իշխանի մարզկանցից մէկը այցելել է առաւորներին և բանտարկեալուհիները պատասխանել են որ իրենց բոլորովին լաւ են զգում:

Հատուրում եմ քեզ:

Եղբայրդ Ա.

— 0 —

19 Մարտ

Թանկագին քոյրիկս,

Իմ քոյր նամակիցս, թէեւ զըրկված ոստիկանութեան միջոցաւ, դու կարող ես հասկանալ, որ մեր սնորքեանը բոլորտացումը յաջող կը ընենցաւ, այսինքն ուսանողներինը ազատվեցին խցիկներից: Ուսանողներին անօթի մնալը տեսեց վեց օր, իսկ մերը չորս օր: Բայց հէնց մեր մէջ այդ անօթութիւնը մեծ չարիք առաջ բերեց: Ինչ երրորդ օրը մեզինք մի քանիսը ցնցում են ունենցաւ, և պատգարակներով հիւանդանոց տարվեցին: Երբ անօթի մնալը վերջացաւ, մեր վիճակը չը մեղմացաւ: Մենք մնացինք խցիկների մէջ և դեռ պէտք է մնանք ամենաասպակ հսկողութեան տակ, եւ միայն վերջին օրերս մեզ թուլ սոււին բանտի նրբանցքները և բազը դուրս գալ երբք քառօրը ժամի շափ: Բանտը կատարելապէս ամբողջ է վերածվել նրբանցքների զինւորների լցված են: Բակն էլ լիքն է Մոսկուայի զանազան զնդորի զինւորներիով: Այսօրուանից ես հիւանդանոցում եմ գտնվում, բայց չեմ կարծում որ, թանկագին քոյրս, հիւանդ լինեմ: Այս միայն տեղս փոխելու համար է, որովհետեւ խցիկը ինձ շատ ձանձարացրեց և առողջապահական պայմանները այն տեղ իսկպակս սարսփելի են, մինչդեռ հիւանդանոցում օդը մաքուր է անլի լուսաւոր և լաւ կերակուրներ կան: Ինձ թուում է որ մեք այստեղ կը մնանք մինչեւ Վոլգայի վրա նաւազնացութիւն սկսվի. որովհետեւ Արխանգելսկ գնալու համար (Սպիտակ ծով) պէտք է վճարան անցնել Եւրասիայի մօտով: Եւ ամեն օր Եւրասիայից հեռախօսք ենք ուղարկում որ՝ Վոլգան բացել է: Սիբիր աքսորվող ընկերներս արդէն ճամբայանք ընկել: Սիբիր աքսորվողներից Կուրուս այս տեղ են, մէկը անկողնի է ճառայում: Իսկ միւսը խօլին մեղամազնութեան մէջ ընկել: Տխրագէմ եւ յոակաց նա չըջագայում է հիւանդանոցի նրբանցքի մի ծայրից միւսը, շարունակ քունքներ չփելով: Երբայի թանկագին է արան դիտելով, լաւ քոյրն էլ Սիբիր է աքսորված:

սուրբ վարին :

— Իսկ դուք, բաւ Դժգոհ, Արփի- արն եւ, Արփիայր... Եւստուած իմ, որչափ լաւ հանդիպում եկաւ ր համարուելինք, եթէ քու հակառակորդներդ չըլլային, ես դիմակդ վար չը պիտի առնէի, անոնք դրոգեցին ինձ :

Թողունք անցեալը, երկու հըն- ջակեան հատուածները միացան, Դաշ նակցականներն ալ եթէ անոնց հետ չը միանան, գոնէ համերաշխութեան պիտի յանգին : Իմ սուտ միութեան կան ծրագրերն չուր ինկան :

Ես ժողովրդին աղտոտ մասին հա- րազաա զաւակն եմ, դուն Ստանպոլի ճիւղայիններուն հարազատ վիժուկը : Ե- կուր, եկուր ձեռք ձեռքի տանք, եր կուսս ալ հալածուած, երկուսս ալ ար- համարուած ենք, երկուսս ալ զի- մակները պատուած են : Եկուր մի- անանք, եւ նոր ընկերութիւն մը հիմնենք, բայց մի մոռնար որ նա- իրագահը ես պիտի ըլլամ, դուն մի- այն դերը — նախագահ պիտի ըլլաս :

— Այ, ոչ, թող զիս, ես վերջնա- պէս հրժարած եմ ապերախտ ազ- գին գործերուն մէջ խառնուելէ : Եւ որչափ ալ որ ստոր ըլլամ, այնուամե- նայնիւ քեզի պէս խմպի մը հետ գործ չեմ ընէր :

Դժգոհին հասած վերաորանքը այն չափ մեծ էր, որ զօրեղապէս ցնցուե- ցաւ ու տեսաւ դառն իրականութիւնը :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայոց ազգին աչքը լոյս, Սուլ- թանի սիրտը լայնցեր է հայ ազ- գին համար :

Իացի Օրման փաշայէն՝ ուրիշ եպիսկոպոսներ և վարդապետներ ալ արժանացեր են վարձիր փա- տիշահին շքանշաններուն :

— Ապրիլ 4ին կարնոյ առաջ- նորդը պատրիարքարանի հեռագ- րած է որ երկու օրուան մէջ չորս զօրաւոր և շատ մըն ալ թեթեւ- ցնցուցներ տեղի ունցցեր են, ժողովուրդը սարսափահար, ոպա- րագահներու մէջ ապաստաներ է շէնքերը միայն վառուեր են :

— Տփլիսի մէջ, գրեթէ յան- կարճական կերպով, ժողովրդա- կան երգերու և քօնսէրտներու սի- րահար կարա — Մուրզան մեռեր է : Մահուան նախորդ իրիկունը հա- մակրելի ազգային երգիչը եր- գերով և արեւելեան պարերով կը բազմէր : Լուսաւորչական և կաթոլիկ կրօնաւորներու մէջ խնդիր եղած է հանգուցեալին պատանանքը, և կը վիճեն ինչ ծէսով պէտք է թաղուի :

Ժողովրդական երգերու սիրա- հարները իրենց գործնական և համակրելի պաշտպանը կը կոր- անցնեն :

— Մոսկուաքնակ թորոսեան եղ- բայրները յանձն առեր են երեք տարի հոգալ Ակնայ արհեստանո- ցի վերածուած որբանոցին ծախ- քը :

— Տփլիսէն կը հազորդին որ Ռուսիոյ վարիչ ծերակոյտը, իբ- րեւ վճռաբեկ տեսան : քննելով Տփլիսի հայոց տոաշնորդութեան բողոքը կրթական նախարարու- թեան ներկայացուցչին գէժ, իր մարտ 20ի նիստին մէջ իրա- ւունք տալով տոաշնորդարանին, վճռեց է որ հայոց և կեղեցւոյն վերադարձուն 52,000 լիրայի արժէքով կառուածները զոր նոյն նախարարութեան ներկայացու- ցիչը գրուած էր իբրեւ գպրո- ցական կառուածներ :

— Հայր Վիշնի տեղ, վէրե- տիկի Միլիթարեանց աթոռակալ կոչուէր է Ռափայէլեան վարժա- րանի անօրէն Հայր Մինաս նու- ի իսան :

— Ստացանք Եւրոպայի Հայ Ռեստորանտի Միութեան հինգե- րորդ համագումարին համար պատրաստուած տեղեկագիրը :

Այդ տեղեկագիրն մէջ աչքի զարկաւ բայց ցաւալի իրողու- թիւնը, Ֆրանսայի Մ. քաղաքին ուսանողները, առաջարկած են Միութեան չըբազիլ հայ ժողովր- դին վերաբերեալ խնդիրներով, այդ ուսանողները ամենքն ալ տաճկահայեր եղած են :

Ճեղեկագիրը մանրամասնօրէն տեղեկութիւն կուտայ Միութեան կատարած և կատարելիք գործե- րուն վրայ, կայ և համառոտ վիճակագրական տեղեկութիւն- ներ ուսանողներու թիւի, մաս- նագիտութեանց և որտեղացի ըլ- լալնուն մասին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսոյ ոռու դեպքանը հրաման ստացեր է Բեթեւրպուրկ երթալ : Արդէն՝ ճամբուղկաւորատու թիւն- ները տեսած է և շատ հաւանա- կան է որ նախ քան մեկնելը Սուլթանի հետ մասնաւոր տեսակ- ցութիւն մը ունենայ :

Կը հաւաստիացնեն թէ Զինովիէֆ կերթայ Բեթեւրպուրկ Մակիդո- նիոյ վիճակի՛ն Թուրքիոյ Աֆրի- քայի մէջ ունեցած ծրագրերնե- րու մասին տեղեկութիւններ տա- լու :

— Սերպիոյ եւ Կարատաղի գեապան ները միասին Սուլթանէն պահանջած են Ֆիրմիլեանի խնդիրը շուտով կար գաղբիլ :

Սուլթան լիստացած է շուտով պատասխան տալ :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Իշխանը վառնայի մայր եկեղեցիի ժամերգութեան ներկայը լալէն վերջ ալ յայտարարեց Վառնայի Միտրապոլիտին

եւ շնորհակալութիւն յայտարարեց պուլ- կար Էքզարխին Ֆիրմիլեանի խնդ- րոյն մէջ բռնած կորովի պիտի հա- ժար : Իր ուրախութիւնը յայտարարեց նաեւ ամբողջ պուլկար ժողովրդին միասնութեան համար նոյն խնդրոյն մասին :

— Երեւոթիսանական ժողովը պիտի գումարուի ապրիլ 24ին :

Պոլսոյ պուլկար Էքզարխը — կու- սակցութեանց պետերու հեռագրին սիրալիր նամակով մը պատասխանած է եւ իր ուրախութիւնը յայտարարեց պուլկար կուսակցականները կրնան այսպիսի պարագաներու մէջ միասին գործել եւ պաշտպանել հայրենիքին շահերը :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Սպանուած նախարարին սպան- նողը վերմերս իր նախապէս յայ տարարած անունը և մականունը ուրացեր է :

Սպանուելիւնը անձնական վը- րէժխնդրութեան գործ չի հա- մարուիր, այլ յեղափոխականնե- րու կողմէ զաւարուելիւն :

Սուրիկանութիւնը չը նայելով իր թափած ճիգերուն, դեռ կը- ցած չէ հասկնալ թէ ուսկէ եկած է յանցաւորը ու ո՞վ է :

— Գերմանական թերթերը կը կարծեն որ յանցաւորը ինքզին- քը թաղնաւորեր է :

Նոյն թերթերը կը հազորդեն Բալդաւաի նահանգին զանազան կողմերը մեծ յուշումներ կան : Իբր թէ գիւղացիները և գործա-ւորները ապստամբած ու քանի մը ամբողջներ թալնած են :

Պ Է Լ Ճ Ի Գ Ա

Պրիւքսէլէն կը հեռագրեն որ՝ գոր ծաւորներու կուսակցութեան ընդ- հանուր Որհնորդը քուէարկած է աշ- խատանքի սկիւլ :

Յայտարարութիւն մը պիտի ուղ- ղուի գործաւորներուն գործարան- ները աշխատանքի երթալու հրաւի- րելու համար :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Հարաւային Ձիւնաստանի մէջ ա- պստամբական շարժումները մեծ ծա-ւալ ընդունել են : Վերջին օրերս ա- պստամբները պաշարեր են նանինկ քաղաքը, նոյն իսկ լուր կը պտտի որ քաղաքը ապստամբներու ձեռքը տն- ցած է : Հեռագրական թելերը Վու- Չուի և նանինկի միջև կտրուած են :

Ն Օ թ Ս Յ Ո Վ Ե Ր Գ Ե Ր

Ֆիլիպէի Հայկ. Երգեցիկ խում- բը պատրաստ ունի հետեւեալ քառաձայն երգերը :

«Մեր Հայրենիք», «Մայր Ա-

րագսի» և «Զինգլիսին ֆաթէն կրտամ», «Լեռն աւազներ», (Կա- րա Մուրզա), «Ի մարտ — բաւ է սրբան», «Վրէժ — թող կորնչին», մէկական երես 15 սանթիմ :

«Արիք Հայկազունք», «Ես լը- սեցի մի անուշ ձայն», և «Օյնա- զան» — ժողովրդական պարերգ — (Կարա Մուրզա) երկու քական ե- րես 30 սանթիմ :

«Սաղմերգ — Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ :

«Գնացէք տեսէք ո՞վ է կերել զէժ» և «Լեփօ լէ լէ» — ժողովր- դական պարերգ — (Կարա Մուրզա) «Կախազան» — բերին աթոռ ելայ, 4ական րես 60ական սանթիմ :

Արտասահմանի համար մէկ ե- րեսը 20 սանթիմ :

Ֆիլիպէի Հայկ. Երգ. — բաս. Խուր

Հասցէ Յակոբ Սըվաճեան (Ֆիլիպոլի)

ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՍՏԱՏԻՆ

— 0 —

Հայրապետ Սարգսեան «Իրէսլավս- կա» մեծ պողոտային վրայ :

Ամենաընտիր ապրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատէրով կօշիկ- ներ, գները չափաւոր, վատան ենք թէ յաճախողները պո՛ս պիտի մնան ամեն կերպ :

Վառնա 9

L'EUROPEEN

— 0 —

Շարաթաթերթ քաղաքական, մի- ջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական եւ գեղարուեստական :

Տարեկան 15 ֆր. Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզու- ալ յայտնուած, հասցէտուած, նամա- կագրուիս, հարանեկան հրաւի- րագիր, մահազգ :

Գրները յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրու- թեամբ և փութով կը կատարուին :

Ուրիշ լուրերու միջև կտրուած են :

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна